նորա տալով 30,000 դահեկանս։ Եւ նորա կալեալ զմանս 'ի գիւղականաց՝ որք մոռեալ էին 'ի քաղաքն հրամանաւ քաղաքապետին՝ և եդ 'ի բանտի և պահանջէր 'ի նոցանէ 1000 քսակս արծաթոյ. իսկ գիւղականք յարեան 'ի վերայ վանօրէից, թէ 'ի ձէնջ խնդրեմք զկալանաւորս մեր. Հայք և Յոյնք տուեալ վասն նոցա 115 քսակս և զերծուցին զնոսա։

Բդեշխն խստացաւ 'ի վերայ նոցա՝ պահանջելով 'ի նոցանէ զայլ իրս, եւ նոքա առաջի եդին նմա զաղքատութիւնս իւրեանց և զհրովարտակն Արքայի, այլ նորա ոչ մատուցեալ ունկն, ասէ՝ եթէ յօժարութեամբ տայք՝ բարի, իսկ եթէ ոչ՝ առնում բռնութեամբ եւ խայտառականօք 'ի լուր ամենեցուն, և դուք գրեցէք առ Թագաւորն և առ որ յուսացեալն էք։ Այսպէս պաշարեալ էին վանականք յամենայն կողմանց 'ի տառապանս յուսարեկ 'ի կենաց, և դումար տոկոսաւոր պարտուց հասեալ էր 870 քսակ արծաթոյ, թող զհարկապահանջ այլազգիս և զմեծամեծս քաղաքին։ Գլխաւորք Լատին և Յոյն վանաց ժողովեցան 'ի Պատրիարքարանն Հայոց, միաբանութեամբ խորհիլ եւ դարման դտանել տառապանացն, զի կուսակալք Դամասկոսի անիրաւ լեալ զկառավարութենէ և ըզբարեկարգութենէ երկրին, միայն զհետ էին կեղեքել ըզվանօրայս և առնուլ զտարեկան հարկս՝ և զայլ ինչս իբրեւ սահմանեալ, որոյ վասն գրեցին առ իւրաքանչիւր ազգային 'ի Կոստանդինուպոլիս և առաքեցին մէն մի վարդապետս՝ Գաբրիէլ և Մեսրոպիանոս 'ի Լատինաց և 'ի Յունաց, և Կեսարացի Մկրտիչ վարդապետ 'ի Հայոց, փոխթ տանել և տալ կարգել զոք յատուկ կուսակալ Երուսաղէմի 'ի բարեկարգութիւն դաւառին եւ յանդորրութիւն վանօրէից և ուխտաւորաց, և խոստացան յերից վանաց հատուցանել, զոր ինչ միանդամ ծախեսցեն 'ի դրունս վասն այսր և այսպիսի որոշմամբ մեկնեցան երեքին վարդապետքն 'ի Կոստանդինուպոլիս (1806. յ2 Փետրվարի)։

Երուսաղէմի Յոյն Պատրիարքն Անթիմոս, որ յառաջագոյն առ հրովարտակ յԱրքայէ հակառակ իրաւանցն Հայոց, և մինչեւ ցարդ պահէին զայն յերուսաղէմ, 'ի սոյն աւուրս փոխանորդն Նաղարէթ ետ արձանագրել զայն 'ի